Մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Վարդենիկի Ա. Օհանյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Ֆիզիկայի» (8 դասաժամ), «Տեխնոլոգիայի»՝ աղջիկների խումբ(5 դասաժամ), «Տեխնոլոգիայի»՝ տղաների խումբ (5 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր, ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3×4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 22-ից մինչև սեպտեմբերի 4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. սեպտեմբերի 6-ին՝ ժամը 14:00-ին,** ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի Ա. Օհանյանի անվան համար 2 հիմնական դպրոցում. հասցեն՝ Գյուղ Վարդենիկ ,Բանավան 9: Տեղեկությունների համար զանգահարել՝ (093)22-00-94 հեռախոսահամարով: